

Ժամանակակից պայմաններում զարգացած երկրները, կարեւորելով փոքր եւ միջին ձեռնարկատիրության դերը տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի սեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձեւավորման, երկրում սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կայունության ապահովման գործում, փորձ են անում պետական աջակցության ծրագրերի միջոցով հնարավորինս արագ չեզոքացնել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետեւանքները: Ծգնաժամի պայմաններում մի շարք երկրներ կիրառում են տնտեսության վրա պետական ազդեցության ուժեղացման միջոցներ: Դրա հետ կապված՝ ձեռնարկվում են հակաճգնաժամային ծրագրեր, որոնք ՓՄՁ ոլորտի սուբյեկտներին ներառում են ֆինանսական օժանդակության ցուցաբերման հույժ կարեւոր միջոցների համալիր, ինչը հանգում է հետեւյալ ուղղություններին.

- արտահանման վարկերի եւ երաշխավորված պարտավորությունների տրամադրման միջոցով ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների վաճառքի ծավալի օժանդակումը եւ շրջանառու կապիտալի պահանջի բավարարումը, հարկային բեռի թեթեւացումը եւ հարկային վճարումների գծով երկարաձգումների մեխանիզմի կիրառումը, ինչպես նաեւ գործարար կապերի մեջ գումարը բոլոր գործընկերների հետ վճարումների ժամկետների կրճատման միջոցների ձեռնարկումը եւ դրամական հոսքերի անընդհատության ապահովումը,

- ՓՄՁ ոլորտի կազմակերպություններին ֆինանսական ռեսուրսների հասանելիության թեթեւացումը, շրջանառու միջոցների ժամանակին տրամադրումը, կրեդիտորական պարտավորությունների վերակառուցումը, երաշխիքների տրամադրման սխեմաների ընդլայնումը եւ գործող վարկերի մարման պայմանների բարելավումը,

- գործող ներդրումային եւ նորարարական ծրագրերի իրացման ու ավարտման նպատակով ՓՄՁ ոլորտի կազմակերպություններին ֆինանսական աջակցության ցուցաբերումը, որոնք բարձր պահանջարկ ունեցող նոր արտադրատեսակներով եւ մատուցվող ծառայություններով ապագայում շուկա դուրս գալու նպատակով ունեն առեւտրային բարձր գրավչություն: Նման աջակցությունն իրականացվում է ներդրումային գրանտների, արտոնյալ վարկերի տրամադրման եւ հիմնական միջոցների արագացված ամորտիզացիայի կիրառման ուղով:

Ընդհանրացված տեսքով աղյուսակում ներկայացվել է ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների համար ֆինանսական աջակցության միջոցների կարեւորագույն ցանկը, որը կիրառվում է տարբեր երկրներում:

Ներկայացված միջոցների նշանակալի մասը, դրանց կիրառման ժամկետների սահմանափակության պատճառով, դեռեւս գործնականում չի ստացել ամբողջական գնահատական: ՓՄՁ ոլորտի կազմակերպություններին ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը մատչելի դարձնելու նպատակով մեծ թվով երկրներում լայն կիրառում են ստացել վարկային երաշխիքների տրամադրում

ման գործող սխեմաների ազատականացմանն ուղղված համալիր միջոցառումները: Անհրաժեշտ ենք համարում նաեւ նշել, որ այդ միջոցները կարող են օգնել ՓՄՁ ոլորտի կազմակերպություններին՝ լուծելու իրենց կարճաժամկետ բարդությունները, որոնք կապված են հաշվեկշռի իրացվելիության անկման հետ: Սակայն մակրոտնտեսական իրավիճակի վաթարացման պայմաններում այդ միջոցները կարող են միայն որոշակի ժամկետով երկարաձգել փոքր եւ միջին կազմակերպություններում հաշվեկշռի իրացվելիության անկումը՝ գործնականում չլուծելով երկարաժամկետ կտրվածքով ֆինանսական ռեսուրսների նկատմամբ ձեւավորված պահանջը:

Առանձին երկրների ճգնաժամային դրսեւորումները հաղթահարելու կարողությունը մեծամասամբ կախված է իրականացվող հարկային եւ դրամավարկային քաղաքականության փոխլրացնող գործունեությունից: Չարգացած երկրները ձեռնարկում են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հաղթահարելու բազում փորձեր՝ կիրառելով հակաճգնաժամային ծրագրերի փաթեթներ, որոնցում ելակետային են համարվում գործարար ակտիվության բարձրացման հետեւյալ հիմնական մեխանիզմները.

- առաջարկի եւ պահանջարկի խթանումը, մասնավորապես՝ սպառողական շուկայի ընդլայնումը, շուկայական ենթակառուցվածքների կատարելագործումը, հարկային քաղաքականության ազատականացումը, սոցիալական ոլորտի ծառայությունների զարգացումը,

- բանկային ոլորտի վարկունակության բարձրացմանն ուղղված ակտիվ միջոցների կիրառումը՝ ներառելով բանկային կապիտալի վերակառուցումը, որը հստակ կանոնների պայմաններում պետք է ի գործ լինի բարելավել նաեւ ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման պայմանները, ինչպես նաեւ առեւտրային բանկերին եւ վարկային կազմակերպություններին պետական լրացուցիչ երաշխիքների տրամադրումը,

- զբաղվածության սոցիալական անվտանգության օժանդակումը, երբ մի շարք երկրների կառավարություններ տրամադրում են սուբսիդիաներ փոքր եւ միջին կազմակերպություններին՝ ոչ լիարժեք աշխատանքային օրվա պայմաններում իրենց աշխատակիցների ամբողջ աշխատավարձը վճարելու համար,

- աշխատանքի շուկայի օժանդակմանն ուղղված միջոցառումների համալիրի իրացումը, մասնավորապես՝ սոցիալական վճարների գծով դրույքաչափերի վերանայումը, ինչպես նաեւ գործազուրկներին օժանդակման ժամանակավոր ծրագրերի ընդլայնումը, արհեստավարժ ուսուցման եւ կարգերի վերապատրաստման կենտրոնների ցանցի ընդլայնումը:

Աղյուսակում բերված տվյալներից հետեւում է, որ ուսումնասիրված երկրների բացարձակ մեծամասնությունը ուշադրությունը բեւեռել է ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների համար երաշխավորված վարկային համակարգերի ձեւավորմանն ու զարգացմանը: Ֆինանսական օժանդակության եւ աջակցության առավել լայն միջոցների համալիր ակտիվ կիրառում են եվրամիության երկրներից հատկապես Իտալիան, Ֆրանսիան, Յուգոսլիան. իսկ աշխարհի

## ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶՈՒՅԱԲԵՐՎՈՂ ԴԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խաչատուր  
ԲԱԲՈՅԱՆ



**ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների ֆինանսական աջակցության ռազմավարական միջոցները ուսումնասիրված երկրներում**

երկրներ	ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների շրջանառու միջոցների տրամադրում, դրամական հոսքերով ապահովում և վաճառքի օժանդակում					Ֆինանսական և վարկային միջոցների նկատմամբ ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների հասանելիության պայմանների բարելավում		ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների համար ներդրումների ուժեղացում	ՓՄՁ ոլորտի կազմակերպություններում իրականացվող խնամակալական կազմակերպությունների ակտիվացում
	կրտսեմանոն ռեզյուսմ ֆինանսական աջակցություն	Շրջանառու միջոցների ստացման օգտագործում	Հարկային օժանդակություն	Պետաստվերների արտոտվարողների արտաքցում	Երաշխավորված վարկերի համակարգի ձևավորում և զարգացում	Վարկավորման ոլորտում միջնորդություն (Վ) և իրավափակի վերահսկումը (Վ)	ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների համար ներդրումների ուժեղացում		
Ավստրալիա									
Ավստրիա	*							*	*
Բելգիա				*					
Մեծ Բրիտանիա				*					
Հունգարիա								*	*
Չեխիա	*							*	*
Հունաստան								*	*
Դանիա	*		*						
Իսպանիա	*							*	*
Իտալիա	*	*	*	*					
Կանադա	*	*	*	*					
Լյուքսեմբուրգ	*							*	*
Մեքսիկա	*		*	*					
Յոլանդիա	*	*	*	*					
Նոր Զելանդիա	*		*	*					
ՆԱՄ				*				*	*
Ֆինլանդիա				*				*	*
Ֆրանսիա		*	*	*					
Չեխիա	*			*				*	*
Ընկերային	*			*				*	*
Հարավային Կորեա				*				*	*
Ծաղրիա				*				*	*
Կիրառելիությունը	12	14	9	5	18	2/2	10	5	

մյուս երկրներից՝ Կանադան, Ավստրալիան: Այս երկրներում առաջ-նահերթություն է ստացել ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների շրջանառու միջոցների տրամադրումը, դրամական հոսքերով ապահովումը և վաճառքի օժանդակումը, ինչպես նաև ֆինանսական և վարկային միջոցների նկատմամբ ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների հասանելիության պայմանների բարելավումը:

Նկատի ունենալով քննարկվող խնդրի կարեւորությունը՝ կարող ենք նշել, որ շուկայական հարաբերությունների անցում կատարած երկրներում ՓՄՁ ոլորտի կազմակերպությունների ֆինանսական վիճակի կայունացմանն ուղղված միջոցները ժամանակային տեսանկյունից որոշակիորեն երկարաձգվում են, ինչը հատկապես բնութագրական է Հայաստանի Հանրապետությանը:

Փոքր և միջին կազմակերպություններին պետական օժանդակությունը շուկայական հարաբերությունների անցում կատարած երկրներում կրում է դրվագային բնույթ, ծավալներով մեծ է և լիարժեք չի լուծում առկա խնդիրները:

Այդ պայմաններում ներդրումային ռեսուրսի հավանական մատակարար կարող է լինել բանկային համակարգը: Սակայն ճգնաժամային պայմաններում ներդրումային մթնոլորտը բարենպաստ չի լինում փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսավորման համար: Առեւտրային վարկը հասանելի չէ այն պարզ պատճառով, որ փոքր ձեռնարկատիրությունը բարձրացված ռիսկի ոլորտ է, և բանկերը մեծ ցանկություն ու նախաձեռնություն չեն դրսևտրում այդ ոլորտը վարկավորելու ուղղությամբ: Վարկերի օգտագործման խոչընդոտ են նաև բարձր տոկոսադրույքը, տրամադրման կարճ ժամկետները և գրավի բարդությունը: Այդ խոչընդոտների հաղթահարման նպատակով հրատապ են դառնում վարկերի հիմնավորման, փոքր կազմակերպություններին դրանց հասանելիության, վարկի վերադարձն ապահովելու համար տարբեր արտոնությունների տրամադրման հարցերը: Դրանց որոշումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրականացվում է վարկային-ներդրումային ռեսուրսների ներդրման հայտնի մեթոդիկաների հիմնավորման միջոցով:

Քիչ կարելու չեն նաև ներդրումների տեսքով վարկային ռեսուրսներ օգտագործող փոքր կազմակերպությունների հիմնարար վերլուծության միտումները և տնտեսական զարգացման օրինաչափությունները: Հարկ և Նկատի ունենալ, որ փոքր և միջին թիվների ոլորտում վարկային-ներդրումային քաղաքականության հիմնախնդրի հետազոտումը էականորեն դժվարանում է նաև տեսական-մեթոդաբանական դժվարությունների պատճառով: Որպես կանոն՝ այն սահմանափակվում է միայն որակյալ վերլուծության մեթոդներով, թեև առաջացող խնդիրները պահանջում են ինչպես քանակական մեթոդների, այնպես էլ մաթեմատիկական մոդելների կիրառում: Սակայն ներկա պայմաններում բավական սակավաթիվ է տնտեսամաթեմատիկական հիմնավորված գործիքակազմի կիրառումը:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք մշակել արտաքին ներդրումների մասնակցությամբ՝ պետական օժանդակության ձեռք բերած կազմակերպության դիմամիկ գործունեության մոդել: Տվյալ դեպքում գործառնական հիմնական հասկացություններ են համարվել տնտեսավարող սուբյեկտների արտադրական գործառնական համակարգերի դիմամիկային, տնտեսական հավասարակշռության և տնտեսական շահերի համաձայնեցման հիմնադրույթները: Փոքր և միջին կազմակերպության արտաքին միջավայրի անորոշության գործոնը առաջարկվող մոդելներում հաշվի կառնվի տարբերակային մոտեցումների կիրառման պայմաններում:

Ստորև ներկայացնենք փոքր և միջին կազմակերպության մեր առաջարկված մոդելը, որում փոփոխականների փոխադարձ կապերը ներկայացվել են ժամանակի գործոնից չկտրված ֆունկցային տեսքով:

**Մոդել 1. Արտաքին ներդրումների մասնակցությամբ՝ պետական օժանդակության ձեռք բերած կազմակերպության դիմամիկ մոդել:**

Ենթադրում ենք, որ կազմակերպությունը կարող է զարգանալ ինչպես ներքին աղբյուրների, այնպես էլ արտաքին ֆինանսական օժանդակության՝ ներդրումների հաշվին: Արտադրական հիմնական միջոցները, որոնք որոշում են արտադրանքի թողարկումը, համարվել է միակ սահմանափակող գործոն: Փոքր կազմակերպությունը գործում է անփոփոխ տեխնոլոգիայի պայմաններում:

Նշված պայմանների դեպքում փոքր կազմակերպության արտադրական գործունեությունը կնկարագրենք որպես Լեոնտեի<sup>6</sup> տեսքի միագործոն արտադրական ֆունկցիա, իսկ կազմակերպության զարգացման տեմպերը կորոշվեն հիմնական միջոցների դիմամիկայով:

**Փոքր և միջին կազմակերպության 1-ին մոդելի հիմնական փոփոխականների միջև կախվածությունը ներկայացնենք հավասարումների հետևյալ համակարգով.**

$$P(t) = f \cdot A(t)(1.1),$$

$$M^{ob}(t) = (1 - c) \cdot P(t)(1.2),$$

$$M(t) = M^{ob}(t) - N(t)(1.3),$$

$$N(t) = \eta P(t) + r_2 k_r (1 - \xi) M(t)(1.4),$$

$$\frac{dA}{dt} = \xi M(t) + I(t)(1.5),$$

$$t \in [0, r] \quad \xi \in [0, 1] \quad k_r \in [0, 1](1.6),$$

որտեղ՝  
 P(t) - ժամանակի t պահին արտադրանքի թողարկումն է արժեքային արտահայտությամբ,  
 f - ֆունդահատույցի ցուցանիշն է,  
 A(t) - ոչ ընթացիկ ակտիվների արժեքն է,  
 M<sup>ob</sup>(t) - փոքր կազմակերպության համախառն շահույթն է,  
 M(t) - գուտ շահույթն է շահութահարկի գծով վճարումը կատարելուց հետո,  
 N(t) - հարկային վճարումների գումարն է,  
 r, r<sub>2</sub> - համապատասխանաբար՝ արտադրանքի թողարկման ծավալի և շահույթի հարկման դրույքներն են,  
 ξ(t) վերաներդրմանն ուղղվող գուտ շահույթի բաժինն է,  
 k<sub>r</sub> - շահույթից հարկային արտոնություններ չունեցող վերաֆինանսավորվող միջոցների բաժինն արտացոլող գործակիցն է, որը գնահատվում է վիճակագրական ուղղով,  
 I(t) - կազմակերպությանը անհատույց տրվող արտաքին ներդրումներն են:  
 Ներկայացված փոփոխականների դեպքում՝  
 (1.1) - որոշում է փոքր կազմակերպության արտադրական գծային ֆունկցիան,  
 (1.2) - փոքր կազմակերպության հաշվեկշռային շահույթի ձեւավորման գործընթացն է՝ արտադրական ծախսերը հանելուց հետո,  
 (1.3) - որոշում է գուտ շահույթի մեծությունը՝ հանելով հարկային

վճարումների ընդհանուր գումարը,

(1.4) - հարկային վճարումների հաշվարկման պարզեցված ալգորիթմն է, որը ներառում է.

- ✓ իրացման շրջանառությունից ԱԱՀ-ն,
- ✓ շահույթից շահութահարկը:

Դրա հետ մեկտեղ, արտոնությունները, որոնք տրամադրվում են արտադրության մեջ իրենց շահույթը վերաներդրող կազմակերպությանը, հաշվի են առնվում ներդրումային հատկացումների բաժնի՝  $\xi$  եւ  $k$  գործակցի միջոցով (այս մեծությունը սովորաբար կախված է արտոնությունների տարածման սահմաններից՝  $\xi_0 \leq \xi$ ):

(1.5) - որոշում է ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական ֆոնդերի) հավելածի դինամիկան՝ ի հաշիվ սեփական միջոցների եւ արտաքին ներդրումների:

Տեղադրելով (1.2) եւ (1.4) հավասարումները (1.3)-ում՝ կստանանք հետևյալը.

$$M(t) = (1-c)P(t) - \eta P(t) + r_2 k \wedge (1-\xi)M(t) = P(t)[(1-c) - \eta] + r_2 k \wedge (1-\xi)M(t) \quad (1.7)$$

Արտահայտելով  $M(t)$  փոփոխականը (1.7) հավասարմամբ՝ կունենանք հետևյալը.

$$M(t) = \frac{1-c-\eta}{1-r_2 k \wedge (1-\xi)} P(t) \quad (1.8)$$

Ստացված (1.8) հավասարումը տեղադրելով (1.5) հավասարման մեջ՝ կստանանք.

$$\frac{dA}{dt} = \bar{a}P(t) + I(t) \quad (1.9)$$

որտեղ՝

$$\bar{a} = \frac{(1-c-\eta)\xi}{1-r_2 k \wedge (1-\xi)}$$

Հաշվի առնելով (1.1) հավասարումը՝ կստանանք վերջնական դիֆերենցիալ հավասարումը, որին հանգում է (1.1) - (1.4) հարաբերությունների համակարգը, որը կներկայացվի հետևյալ տեսքով.

$$\frac{dA}{dt} = aA(t) + I(t) \quad (1.10)$$

որտեղ՝  $a = \bar{a}$  :

Այժմ դիտարկենք ներդրումների՝  $I(t)$ , երեք դեպք.

$$\checkmark I(t) = f_0 = const,$$

$$\checkmark I(t) = \beta t,$$

$$\checkmark I(t) = B \exp\{\beta t\} \quad (1.11)$$

Հաստատուն գործակիցներով (1.5) գծային ոչ նույնաբևույթ դիֆերենցիալ հավասարման որոշումը դիտարկվող աջ մասերի համար կունենա հետևյալ տեսքը.

$$A(t) = (A_0 + \frac{f_0}{a}) \exp\{at\} - \frac{f_0}{a} \quad (1.12),$$

$$A(t) = (A_0 + \frac{\beta}{a^2}) \exp\{at\} - \frac{\beta}{a^2} (at + 1) \quad (1.13),$$

$$A(t) = \left[ A_0 + \frac{\beta}{(a-\beta)} \right] \exp\{at\} - \left[ \frac{\beta}{(a-\beta)} \right] \exp\{\beta t\} \quad (1.14):$$

Համադրելով ոչ ընթացիկ ակտիվների աճի տեմպերը փոքր եւ միջին կազմակերպության ներդրումների տարբեր տարբերակների դեպքում՝ պարզում ենք, որ դրանք ամենաբարձրը լինում են ինտենսիվ ֆինանսական օժանդակության պարագայում: Սակայն դրանք նույնպես կախված են այն փոփոխականներից, որոնք բնութագրում են դիտարկվող տնտեսական օբյեկտի գործունեությունը: Այսպես,  $t \rightarrow \infty$  (այսմանի դեպքում ընթացիկ ակտիվների աճի տեմպը որոշվում է  $\frac{f_0}{a}, \frac{\beta}{a^2}, \frac{\beta}{(a-\beta)}$  փոփոխականներով, որոնք էականորեն կախված են դիտարկվող տնտեսական համակարգի՝ փոքր եւ միջին կազմակերպության կառուցվածքային բնութագրիչներից:

Առաջարկված մոդելը կարող է կիրառվել նաեւ այն փոքր ու միջին կազմակերպությունների համար, որոնց արտադրական գործընթացը բնութագրվում է այլ արտադրական ֆունկցիաներով:

1. Мальный бизнес в России, Аналитическое пособие, Серия "Бизнес Тезаурус" (аналитические справочники для российского бизнеса), М.: КОНСЭКО, 1998, 352 с.

2. Country Responses to the 14 January OECD WPSMEE Questionnaire on the Global Crisis on SMEs and Entrepreneurship Financing.  
3. Ансофф И., Новая корпоративная стратегия, СПб.: Питер, 1999, с. 127.

4. Куцури Г.Н., Критерии эффективности функционирования и регулирования финансовой системы, СПб.: Изд. Санкт-петербургского государственного финансово-экономического университета, 2000, 156 с.

5. Методические рекомендации по оценке эффективности инвестиционных проектов и их отбору для финансирования, Госстрой России, Минэкономики РФ, Минфинансов РФ, Госкомпром России, #7-12/47, 31.03.94, М. 1994.

6. Плакунов М.К., Раяцкас Р.Л., Производственные функции в экономическом анализе, Вильнюс: Минтас, 1984; Клейнер Г.Б., Стратегия предприятия, М.: Дело, 2008, 568 с.

### Օգտագործված գրականություն

1. Ансофф И., Новая корпоративная стратегия, СПб.: Питер, 1999.

2. Методические рекомендации по оценке эффективности инвестиционных проектов и их отбору для финансирования, Госстрой России, Минэкономики РФ, Минфинансов РФ, Госкомпром России, #7-12/47, 31.03.94, М. 1994.

3. Мальный бизнес в России, Аналитическое пособие, Серия "Бизнес Тезаурус" (аналитические справочники для российского бизнеса), М.: КОНСЭКО, 1998, 352 с.

4. Куцури Г.Н., Критерии эффективности функционирования и регулирования финансовой системы. СПб.: Изд. Санкт-петербургского государственного финансово-экономического университета, 2000, 156 с.

5. Клейнер Г.Б., Стратегия предприятия, М.: Дело, 2008, 568 с.  
6. Клейнер Г.Б., Микроэкономика знаний (совместно с В.Л. Макаровым), М.: Экономика, 2007, 208 с.

7. Клейнер Г.Б., Эволюция институциональных систем, М.: Наука, 2004, 240 с.

8. Плакунов М.К., Раяцкас Р.Л., Производственные функции в экономическом анализе, Вильнюс: Минтас, 1984.

9. Country Responses to the 14 January OECD WPSMEE Questionnaire on the Global Crisis on SMEs and Entrepreneurship Financing.